ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2026 թվականի N 492-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին»ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման և հիմք ընդունելով կառուցապատողի կողմից տրված 10.04.2026թ. ՃՀԱ/104/9928-26 դիմում-հայտը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի 5-րդ փողոց 9/10 հողամաս հասցեում բնակելի տան, լողավազանի, օժանդակ տարածքի և խարույկատեղի կառուցման աշխատանքների կատարման նպատակով Արմեն Ավինյանին տրամադրել նախագծման թույլտվություն:
2. Կազմված նախագծային փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ղեկավարի 24 մարտի 2026 թվականի 378-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. ապրիլի 22
ք. Ճամբարակ